

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ՆԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ԵՎ
ՆԱՅՈՅ ԴԱՎԱՆԱՆՔԻ ԶԱՏԱԳՈՎ

Գրիգոր Մագիստրոս Պառլավունիս (Բջնեցի) բազմակողմանի գիտնական էր: Հիմնավորապես կրթված լինելով Անիի ուսումնագիտական կենտրոնում, ապա Կոստանդնուպոլսի բարձրագույն դպրոցներում, նա իմաստասիրական և տեսական մյուս բնագավառներում ամբարած խորը գիտելիքներից զուգահեռ հմտացավ նաև Հայոց Եկեղեցու դավանաբանության ասպարեզում: Նրա հեղինակած գրեթե բոլոր գործերն արգասիք են խորահնուտ հավատաբանի և հայրենասեր գործչի իմաստահեղ մտորումների: Հիմնականում դրանով էր պայմանավորված Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի և ուրիշ հայ հոգևորականների հետ նրա դրսևորած հոգեկցությունը, որն արտացոլք է գտել նրա թղթերում: Պետրոս Գետադարձ Կաթողիկոսին հղած մամակներից երևում է, որ Գրիգոր Բջնեցին գնահատել է նրա բարձր պատրաստվածությունը: Հայոց Կաթողիկոսն իր հերթին հիացել է Գրիգոր Մագիստրոսի իմաստասիրությամբ, որին նա գրել է՝ «Ջանապառն հեղուս գիտութիւն և շնորհ»¹:

Գրիգոր Մագիստրոսը համոզված էր, որ «Գիտության լույսն ընկալում են հավատով»²: Նա մարդկանց մեջ գնահատում է երկու կարևոր հատկանիշ՝ հավատն ու իմաստությունը, գտնում է, որ «ի կենցաղումս յայս դուզմաքեայ երկիցս այս պատուելի է նախ հաւատ, երկրորդ՝ իմաստութիւն և հանճար»³: Ի զուգակշիռ Գրիգոր Նարեկացու, Մագիստրոսը համոզված է, որ մարդու ամենամիկրակաճ ձգտումը պետք է լինի Աստծուն մերձենալը, քրիստոնեական հավատի մեջ ունեցած ջերմեռանդությունը: Նա կողմնակից է բանական և գիտության հետ աղերսակցվող, նրանով հարստացող ու լիակշիռ բովանդակությամբ օժտված հավատքին:

Մագիստրոսը մեծ հեղինակություն էր վայելում բարձրաստիճան հայ հոգևորականության շրջանում: Մատթեոս Ուոհայեցու վկայությամբ, Հայոց ՆՁԵ (485/1036) թվականին արեգակի խավարմամբ ահաբեկված Հովհաննես-Սմբատ թագավորը և Պետրոս Կաթողիկոսն այդ երևույթի պարզաբանման համար նշանավոր վարդապետ և աստվածաբան Հովհաննես Կոզեռնի մոտ են ուղարկում պատվիրակություն՝ բաղկացած հոգևոր հայրերից ու աշխարհական տերերից՝ Գրիգոր Մագիստրոսի գլխավորությամբ⁴, ինչը վկայում է արքունիքում և հոգևոր վերնախավում նրա ունեցած բարձր համարումի մասին:

¹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լույս ընծ. Կ. Կոստանդնուց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 3:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 201:

⁴ Տե՛ս Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 67:

Գիտության և բանականության լույսով հավատն իմաստավորելու համար Գրիգոր Մագիստրոսն անեցի գիտուն Գրիգոր Հնձեցի Պահլավունուն առաքեց Վանանդի թագավոր Գագիկ Աբասյանի մոտ՝ նրան հորդորելով հիմնել թագավորական ճեմարան, ընդ որում նշելով, որ գոյություն ունի Աստծուն մերձենալու միայն մեկ ուղի, այն է՝ երբ հավատացյալն իրեն լուսավորում է գիտությամբ: «Մերձենալ առ Աստուած,- գրում է Մագիստրոսը,- բարի է լույս: Եւ ոչ այլ ինչ է հնար մերձենալ, եթէ ոչ գիտութեամբ: Լուսաւորել զանձն»⁵: Գագիկ արքային հղած թղթում Մագիստրոսը Գրիգոր Հնձացուն բնութագրում է իրրև խորագիտակ «աստուածեղէն դաւանութեան մերոյ բախտի»⁶:

Միաժամանակ դիտելի է, որ Մագիստրոսը հավատը և նրա իմաստասիրությունը՝ աստվածաբանությունը, շաղկապում է բնական գիտությունների հետ: Նա հմուտ էր ոչ միայն իմաստասիրության, քերականության, դիցաբանության, քրիստոնեաբանության, այլև բնագիտության, բժշկագիտության և մաթեմատիկայի բնագավառներում⁷: Մոկքի և Մանագկերտի եպիսկոպոս Գրիգորին հղած թղթում Մագիստրոսը տիեզերքը բաժանում է մեծ և փոքր աշխարհների, մեծը՝ «աշխարհ աստուածային էութիւնն իմանի... իսկ փոքր՝ մարդկայինս սեռ», և հորդորում է՝ «որքան կարողութիւն է զարդարել զաշխարհ և օգնական լինել իրրև զծառայ հլու և հպատակ Ստեղծչին զսա»⁸:

Նա գիտությունը բաժանում է երեք գլխավոր ճյուղերի՝ բնագիտություն, մաթեմատիկա և աստվածաբանություն՝ դրանք հարակցելով միմյանց հետ: Հույն դպիր Կիրակոսին ուղղած թղթում նա գրում է՝ «որք ի բնաբանականէն յաստուածաբանականն ամբառնան, ըստ այնոսիկ հաւանիմք զոյ»: Բնագիտությունից աստվածաբանություն բարձրացողներից համարում է խավարից դեպի լույսն ու արեգակը ձգտողներ⁹: Իմաստասերները,- գրում է նա, նյութականից բարձրանում են աննյութականը՝ «այսինքն ի բնաբանականէն յաստուածաբանականն»¹⁰: Մագիստրոսը համոզված է, որ Հայոց Եկեղեցին կարող է անասան մնալ «քաջողջական հոգւովն մաքրափայլ տեսութեամբ», քանի որ «քաջաց և առաքինեաց են յարմարագոյն հովուաց»¹¹:

Նա Տիրոջ պատվիրանները և գիտությունը համարում է «աչքերի լույս», որից զրկվում են դրան անգիտացողները: Ի հաստատումն դրա, Մագիստրոսը վկայաբերում է Սողոմոն իմաստունին, որը «գիմաստութիւն խնդրէ յԱստուծոյ», իսկ Դավիթը՝ «զպատուիրանս Աստուծոյ և զգիտութիւն լոյս աչաց հաւանեցաւ զոյ»¹²:

Գրիգոր Մագիստրոսը հելլենական գիտության ջատագովն էր¹³, ձգտում էր այն սերմանել նաև հայ մտաշխարհում: Հունական գիտությունը համարում է այս աշխարհում

⁵ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 97:

⁶ Նույն տեղում:

⁷ V. Langlois, Me'moire sur la vie et les e'crits du prince Gre'goire Magistros, duc de la Me'sopotamie, auteur armenien du XI^e siecle ("Journal Asiatique", t. XIII, Paris, 1869, p. 3).

⁸ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 85:

⁹ Նույն տեղում, էջ 114:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 146:

¹² Նույն տեղում, էջ 173:

¹³ Տե՛ս Մ. Արևիյան, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 34-35, 37:

վեհագույնն ու ազնվագույնը¹⁴: Բայց նա իր աշակերտներին խորհուրդ էր տալիս հույն իմաստասերների և գիտության մյուս մշակների գործերն ուսումնասիրելուց առաջ տիրա-
 իմաստասերների և գիտության մյուս մշակների գործերն ուսումնասիրելուց առաջ տիրա-
 պետել «ներկուտ վերծանութեամբ զՀին և զՆոր Կտակարան» և դիցաբանությանը¹⁵: Իբ-
 րահիմ անուճով արաբ (մոր կողմից՝ հայ) գիտունին հղած թղթում Մագիստրոսը գրում է,
 որ «թէև ոչ ենք անտեղեակ աթենացոցն ստորոգութեանց և հելլենական հանճարոյ, սա-
 կայն հաւատք մեր ծածկեցին զիմաստութիւն, վասն զի հոգեղենք ենք և ոչ մարմին, և ոչ
 ամմարմին», բայց հարում է նա, - հոգին ծածկում է մարմին՝ «երկրորդ ծննդեամբն մեր. որ
 ի հոգւոյն ծնեալք եղեալք»: Դրա շնորհիվ, շարունակում է գիտնականը, մեր հավատքը
 հնարավորություն է ընձեռում վերահասու լինել և հավատալ աներևույթին, այդ կերպ ըմ-
 բռնել մարդկային իմացականությանն անհասանելի, անմեկնելի երևույթները¹⁶:

Նույն ամիրային ուղղած մեկ այլ նամակում Մագիստրոսը մեկ անգամ ևս հավաստում
 է, որ այս կյանքում «պատուելի է նախ հաւատ, երկրորդ իմաստութիւն և հանճար: Եւ եւ
 սոքա մականասար ամենայն պարտութեան և պայծառութեան», ավելին՝ դրանք պարո-
 նակում են ամենայն բարիքներ և ապագայի առհավատչյան են¹⁷: Այդպիսով հավատն ու
 իմաստությունն ընդգրկում են ամեն ինչ և նախապատրաստում զալիքը: Այստեղից հե-
 տևում է, որ առանց հավատի և իմաստության չի կարող լինել բովանդակալից ու պայծառ
 ապագա: Այս դեպքում ևս գիտնականը առաջնություն է վերապահում հավատին:

Գրիգոր Մագիստրոսը հավատքի աղբյուր է համարում Ս. Գիրքն իբրև արդարախոյզ
 ու ճշմարիտ ուսմունք և աշխարհընկալում պարզևող առաջին ու զլիսավոր մատյան: «Եւ ո՞
 արդեօք ծեր կամ հնագոյն քան զԳիրս Սուրբս և Աստուածաշունչս. վասն զի յայնժամ ոչ
 գոյր գիրս, այլ միայն հարցն և ծերոցն պարտ էր հաւանել զրուցատրութեան»¹⁸, - գրում է
 նա Պետրոս Կաթողիկոսին ուղղված թղթերից մեկում: Ըստ Մագիստրոսի, աստվածային
 պատվիրանները «լոյս են և լոյս տան աչաց, և յայնմանէ երկիւղ սուրբ, որ մնայ
 յաւիտեան»¹⁹, ուստի Սուրբ Գիրքը հավերժագո ու հարամնա արժեք է դառնում: Ընդ որում
 Մագիստրոսը գտնում է նաև, որ հելլենացի գիտունների իմացախոհական գործերում
 մույնպես առկա է «կաթիլ իմն աստուածային»²⁰: Հետևությունը պարզ է՝ բացի Աստվածա-
 շնչից, կարևորում է նաև անտիկ գիտության ուսումնասիրությունը, ինչը աշխարհականա-
 ցող, մտավոր վերազարթոնք ապրող ժամանակի պահանջն էր:

Գրիգոր Մագիստրոսն աշխարհական լինելով հանդերձ, խորացել է նաև աստվածա-
 բանության մեջ: Նա Ս. Գրքից կատարում է բազմաթիվ ու անթերի հղումներ, քաջագի-
 տակ էր Եկեղեցու հայրերի գործերին:

Մագիստրոսն իրեն դրսևորում է ոչ միայն իբրև խորատես հավատաբան և ջերմեռանդ
 եկեղեցաբան, այլև գտնում է, որ առանց քառյակ գիտությունները, բնագիտությունն

¹⁴ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 106:

¹⁵ Տե՛ս մույն տեղում, էջ 105:

¹⁶ Նույն տեղում, էջ 174:

¹⁷ Տե՛ս մույն տեղում, էջ 201-202:

¹⁸ Նույն տեղում, էջ 27:

¹⁹ Նույն տեղում, էջ 4:

²⁰ Նույն տեղում, էջ 5:

ուսումնասիրելու, հմարավոր չէ աստվածաբանություն ուսուցանել: «Որք,- կարդում ենք Պետրոս Կաթողիկոսին նրա հղած մի թղթում,- ոչ մախուստ կրթեալք են, բոլորովին ոչ գոյ հմար թեակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս. քանզի պարտ է մախ ի բնաբանակա-նէն յուսումնականն ամբառնալ և անտուստ աստուածաբանականն»²¹:

Մագիստրոսի կարծիքով, իմաստասիրելու ունակությունը «ձիր պարզևի ի հոգւոյն է. բայց և զկնի քաղիցն ուսումնականաց տիրապէս կատարեալ անցանել... ի մակացու-թեանն մակացութիւն. քանզի և սա ոչ այլ ինչ ունի տեսութեան դիտաւորութիւն, եթէ ոչ ի մմանութիւն Աստուծոյ»²²: Այդպիսով, «Գիտությունների գիտության» («մակացութեանն մակացութիւն»), իմա՝ աստվածաբանության (որի մպատակն Աստծուն մմանվելն է) ուսումնասիրելուց առաջ պետք է խորանալ քառյակ գիտությունների մեջ:

Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողեան» պոեմը Ս. Գրքի չափածոյացված համառոտ շարադրանքն է: 1045 թ. Բագրատունի վերջին թագավորը անգաղղոսէ կերպով հրավիր-վեց Կ. Պոլիս: Նրա ետևից այնտեղ մեկնեց նաև Գրիգոր Մագիստրոսը՝ հավանաբար հա-յոց թագավորին պաշտպանելու մպատակով²³: Կայսրության մայրաքաղաքում նա հան-դիպեց մահմեդական հավատաբան Մանուչեին, որն իր իմաստությամբ հռչակված էր արաբական աշխարհում, նաև պատվի էր արժանացել Կոստանդին կայսեր կողմից: Այս գիտունի հետ Մագիստրոսը զրույցի է բռնվում հավատի շուրջ: Մանուչեն Ղուրանը զերի-վեր է համարում Աստվածաշնչից, քանի որ, ըստ նրա, մահմեդականների այդ սրբազան գիրքը շարադրված է չափածո ձևով, որին ի պատասխան, Մագիստրոսն ասում է, որ չափածոյով հորինելը ոչ թե ի վերուստ է սահմանված, այլ ձեռք է բերվում աշխատու-թյամբ:

Վեճը հանգուցալուծվում է, երբ Մագիստրոսը հայտարարում է, թե այն, ինչ Մուհամ-մեդը գրել է 40 տարում, ինքը գրելու է 4 օրում՝ սկսելով աշխարհի արարչագործությունից և հասցնելով մինչև Քրիստոս: Մանուչեն խոստանում է քրիստոնյա դառնալ, եթե Մագիս-տրոսն իրոք շարադրի իր խոստացածը²⁴: Հեղինակն այս պոեմում գրում է նաև Հայոց Եկեղեցու հայրերի մասին՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև Մաշտոցն ու թարգմանիչ-ները: Պոեմն սկսվում է այսպես.

Մեծ են գործք աստուածային, սքանչելի մորա բանին.
Հրաշալի անպատմելին, յամենայնի զարմանալին...
Ստեղծող զոյից բոլոր՝ որք ի ծածուկ և որք երևին...
Անսկիզբն, անժամանակ և արարող յաիտեմին²⁵:

²¹ Նույն տեղում, էջ 8:
²² Նույն տեղում, էջ 226:
²³ Տե՛ս Լ. Խաչերեան, Գրիգոր Պաղլաունի Մագիստրոս (985-1058), Լոս Անճելոս, 1987, էջ 134-135:
²⁴ Տե՛ս Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պաղլաունոյ, Վեճնտիկ, 1868, էջ Ա-Գ:
²⁵ Նույն տեղում, էջ 1-2:

Գրիգոր Լուսավորչի մասին գրում է.

Զարթոյն մեր Գրիգորի և զՀայոց Լուսավորչին,
Քաղաքաւրն Պառլամին և ըստ ազգին Արշակունին,
Զմաքուր հայրապետին և սքանչելի մարտիրոսին...
Մարգարէ գաւ տեսողին և ուսուցիչ մերոյ ազգին²⁶:

Այնուհետև տրված են Տրդատ Մեծի հետ Գրիգորի Հոռմ մեկնելն, ապա Կեսարիայում ձեռնադրվելն, այնտեղից Ս. Կարապետի և Աթանազիոսի մասունքները Հայաստան բերելը և Աշտիշատում ամփոփելը, Հոփսիսիմյանց մահատակությունը և այլն: Հիշվում են նաև Գրիգոր Լուսավորչի որդիները՝ ճշելով նաև՝ «Արդ զիս յայս տոհմէ զիտեմ ազգաւ Պարթև իմ հայրենին»²⁷: Գրիգոր Լուսավորչից սերած լինելու գաղափարը նույնպես հիմք կարող էր դառնալ Մագիստրոսի եկեղեցամայատ ուղեգծի և հոգևոր հայրերի հետ նրա ունեցած հոգեկցության համար:

Պոռնոմ զգացվում է նաև Գրիգոր Նարեկացու ազդեցությունը: Նրա հետևողությամբ Մագիստրոսն առաջադրում է բոլոր ազգերի, ցեղերի ու անհատների փրկության գաղափարը²⁸: Վերջին դատաստանը պատկերելիս մա դողում ու սարսափում է Նարեկացու պես²⁹:

«Հագարտողյանը» համարվում է հայոց տաղասացության մեջ մորարարություն, և անդրամիկ հանգավոր երկասիրությունը³⁰: Այս պոեմին է հարում Մագիստրոսի «Ներբողեան ի սուրբ Խաչն Բրիստոսընկալ» գործը, որտեղ գովերգում է Ս. Խաչը.

Նախնոյն մեր առաջին մորգութեան կնիքը կանգնեալ...
Գործիդ մահու կենաց՝ ի յարութիւն մեզ մերգործեալ:
Բըղխումն անապական՝ աղբիւր կենաց ի քեզ հոսեալ³¹:

Ս. Խաչը ոչ միայն արիություն, իմաստություն է պարգևում, այլև «սգաւորաց մխիթարիչ» է, տրտմացողներին ուրախացնող, աշխարհի չորս ծագերից մոլորյալներին ժողովող, որը նաև թողություն է պարգևում մեղապարտ հոգիներին³²: Այստեղ նույնպես զգացվում է Գրիգոր Նարեկացու ազդեցությունը: Վերջինս համոզված էր, որ խաչի մշանով խափանվում են թշնամական հարձակումները, պրկվում են չար ոգիները և այլն³³: Նարե-

²⁶ Նույն տեղում, էջ 70-71:

²⁷ Նույն տեղում, էջ 73:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 76:

²⁹ Տե՛ս Մ. Արեղյան, Երկեր, Դ, էջ 47:

³⁰ Տե՛ս Ս. Մխիթարյան, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 2001, էջ 106:

³¹ Գրիգոր Մագիստրոս, Տաղասացութիւնք, էջ 85:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 84, 86-87, տե՛ս նաև Գր. Մագիստրոս, Թղթեր, էջ 168-169:

³³ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենանոցընդունեան, աշխ. Պ. Խաչատրյանի և Ա. Ղազմյանի, Երևան, 1985, Բան ՂԱ, 15-26:

կացին տեղում է, որպեսզի խաչը պաշտպան լինի իր երդիկին, միշտ լինի իր աչքերի առջև, մույմիսկ դրոշմվի իր դրան ճակատին³⁴:

Գրիգոր Մագիստրոսը գրել է մահ «Առ սուրբ Կարապետն Յովհաննէս» ներքոյանը, որտեղ շեշտում է Հովհաննէսի հրեշտակային վարքը, Աստուծոց նրա արժանանալը Փրկչին մկրտելու շնորհին: Այս գրվածքը մամուռնայան եզրեր ունի Գրիգոր Նարեկացու «Քարոզ Գրիգոր Նարեկացոյ ասացեալ ի սուրբ Յովհաննէս Մկրտչին» գործի³⁵ հետ: Մագիստրոսը գրել է մահ մի շարական, ուր գովերգվում է Հավուց թառի Ամենափրկիչ եկեղեցում քանդակված Հիսուսի պատկերը: Նույն եկեղեցու որմին Գրիգոր Մագիստրոսի կողմից 1013 թ. թողած արձանագրության մեջ Հավուց թառը համարվում է «հանգստաբան եւ արարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին»³⁶:

Հետագայում (1360-ական թթ.) Արարատյան երկրի Եպիսկոպոս Մանուել Բջնեցին (Եղվարդի Ազիբեկենց իշխանական գերդաստանից) այդ սրբությանը նվիրված գանձի մեջ գրում է, որ Քրիստոսի խաչելությունից հետո նրա պատկերը տեղափոխվում է Հոռմ: Գրիգոր Մագիստրոսն իր Վահրամ որդուն ուղարկում է Հոռմ՝ խնդրելու այդ սրբությունը: Վասիլ կայսրը և Գորգ իշխանը Մագիստրոսին են նվիրում այդ գանձը: Վերջինս «մեծաւ հանդիսիւ ընդ յառաջ շարժի» և ուսամբարձ բերում-գետեղում է «յովստի, յարկ իւր կայանի», ապա, որոշ ժամանակ անցնելուց հետո, այն տեղափոխում է իր հիմնած Հավուց թառի վանք³⁷: Վասիլ կայսեր հիշատակումը վկայում է, որ հիշյալ սրբությունը Հայաստան է տեղափոխվել ավելի վաղ՝ հավանաբար, Վասիլ II կայսեր և վրաց Գեորգի թագավորի օրոք: Այնուհետև Մանուել Բջնեցին գրում է.

Իսկ Մագիստրոսին յորժամ եղ հարկին զտիպն աստուածային:
Արար խրախութիւն տաւնախմբութիւն զեալոն ար միասին:
Եւ ի դէմս դրոշմին եւ լեկեղեցին երգեաց զովութիւն
Զերգս շարականին, զորս ըստ պատկերին, որք ի կարգ խաչին³⁸:

Հավուց թառի Ամենափրկիչ եկեղեցու վերոնշյալ արձանագրության մեջ նշվում է, որ եկեղեցին «վերստին կառուցել է» Մագիստրոսը³⁹: Հետևաբար, վերջինս վերաշինել է նախկինում կառուցվածը՝ այնտեղ գետեղելով Փրկչի պատկերը՝ «զվէմն հաւատոյ», ինչի մասին նշվում է մահ Մագիստրոսի հորինած շարականում:

Գրիգոր Մագիստրոսը հովանավորում էր Եկեղեցու հայրերին, որոնք նրան էին դիմում իրենց հուզող գիտական, ուսումնական, մահ առօրեական կենսահույզ խնդիրները լուծելու

³⁴ Տե՛ս մույն տեղում, Բան ՂԱ, 34, 36: Նշենք մահ, որ Նարեկացին ունի «Տաղ սուրբ խաչին» քանաստեղծությունը (տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխ. Ա. Բյոշկեյանի, Երևան, 1981, էջ 129-130):

³⁵ Տե՛ս Գր. Նարեկացի, Տաղեր և գանձեր, էջ 141 և հտ.:

³⁶ Գ. Յովսեփեանց, Հաւուց թառի Ամենափրկիչը եւ մոյմամուն յուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 2:

³⁷ Տե՛ս մույն տեղում, էջ 88:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 354:

ակնկալությամբ: Մագիստրոսը սիրով արձագանքում էր նրանց՝ մամականերով, երբեմն մասնաձևական շփումներով: Հայտնի է նրա մեթոդականությունը Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի հետ (որը կողմ էր Բյուզանդիային դավանական զիջումներ անելուն), ինչը բխում էր Եկեղեցու հանդեպ Մագիստրոսի տածած խորը հարգանքից, որի թելադրանքով Մագիստրոսը Պետրոսին մվիրեց «խաչանձան գավազան»՝ այդ առթիվ նրան ձոնելով չափածո մեքերդական: Այդ գրվածքում կաթողիկոսը համեմատվում է հրեից Մովսես մարգարեի հետ, համոզմունք հայտնվում, որ նույն գավազանով մա հայերին առաջնորդելու է դեպի «Ավետյաց երկիր»⁴⁰, իսկ՝ Հայոց բնաշխարհ:

Պետրոսին հղած նամակները արդյունք էին վերջինիս ունեցած գիտական նախադի-
րությունների և գերծ էին քաղաքական գաղափարակցության հնչերանգներից: Հայտնի է,
որ Մազիստրոսը երբեք չթողթակցեց Պետրոս Կաթողիկոսին գաղափարակից վեստ
Սարգսի հետ, որն իր փեսան էր:

Մագիստրոսում, իբրև աշխարհիկ իշխանավոր, նաև գերակայություն ունեւ Եկեղեցու հանդեպ, նշանակում էր իրեն եմթակա շրջանների հոգևոր առաջնորդների, հարկ եղած դեպքերում սաստում նրանց: Այսպես, նա դժգոհում է մի եպիսկոպոսից, որին ինքն էր հովվապետ կարգել: Նշում է, որ նրան չի կարելի եպիսկոպոսի անուն տալ, թեև «դէտ կացուցի, և ոչ միայն դէտ, այլ և վերադիտող», մինչդէտ նա չէր վերացրել բնակչության հեթանոսաբարո տովորությունները՝ գերեզմանի շուրջ սգահանդեսի պահին պար գալը, ոտքերով գետիմը դոփելը, ծափ տալը և այլն⁴¹:

Գրիգոր Մագիստրոսը հիմնեց Բջնիի եպիսկոպոսությունը, որն ազդեցիկ դեր խաղաց արևելահայոց կյանքում: Բրիստոնեական հավատն ու հայրենիքը Մագիստրոսի համար անբաժան էին, ուստի մա ջանքեր էր ներդնում դրանց հիմքերն ամրապնդելու, հայրենիքի սահմանները պահպանելու համար: Մոկաց Գրիգոր եպիսկոպոսին ուղղված թղթում մա գրում է, որ Աստծու պատվիրաններից ամենագլխավորը հայրենիքի սահմանները պահպանելու պատգամն է, իսկ մարդկային գործերից ամենավատթարը՝ երկիրը պառակտելը, ինչին խոչընդոտելու համար ինքը կարելվույն չափ ջանքեր է ներդրել⁴²:

Ուստի համոզիչ չէ Սամուել Ամեցու հաղորդումը, որ իբր Գրիգոր Մազիստրոսը վեստ Սարգսի ու Պետրոս Գետադարձի հետ «նեմզեցին զԳագիկ և զԱնի ետուն ի կայսրն Յու-մաց»⁴³։ Մազիստրոսը ոչ միայն չի դավել Բագրատունի արքային, այլև սատարել է նրան։ Նա սրտի մորմոքով է գրում Հովհաննես-Սմբատի կտակի և Բագրատունյաց թագավորու-թյան վերացման մասին, ճշում, որ ինքն անմասն է դրան։ Միջագետքի, Տարոնի և հարա-կից շրջանների դուքս կարգված Մազիստրոսը հոգեբանական ճգնաժամի մեջ էր՝ դառն

⁴⁰ Տե՛ս Գրիգոր Մազիստրոսի թղթերը, էջ 31-32: Սակայն Մազիստրոսը չէր կիսում Պետրոս Գետադարձի քաղաքական հայացքները: Հայտնի է, որ 1037 թ. Հովհաննես-Սմբատ թագավորի հրամանով Պետրոս Կաթողիկոսը բանտարկվեց հենց Գրիգոր Մազիստրոսի Բջնի ամրոցում (տե՛ս Հաւաքումն Պատմութեան վարդապետի, վնճարի, 1862, էջ 98):

⁴¹ Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 47:

⁴² Տե՛ս մույն տեղում, էջ 55:

⁴³ Սամուելի քառամյաի Աննայի Հաաքումը ի գրոց պատմագրաց, աշխ. Ա. տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 107:

հիասթափություն էր ապրում, իրեն համարում վաճառված ու տարագիր, «ի հարց շիրմաց արտակացեալ և ի դաստակերտաց և ի բազում աշխատութեանց ունայնացեալ»⁴⁴։ Ամշուշտ, Գրիգոր Նարեկացու հետևողությամբ է Մագիստրոսն ինքնապարսալ խոսքերով հիշում իր աշխարհական «ծովածուփ կենցաղավարության» և այլ մեղանշումների մասին՝ գոչելով. «Ո՞ր զիս փրկեցէ յայսպիսի վտանգէ»։ Իր ծանրամեղ համարվող աշխարհական գայթակղությունների պատճառով նա իր մերձավորներ Գրիգոր քահանային և Ստեփաննոս արքեպիսկոպոսին ուղղած նամակում խնդրում է. «Անկեալ առ ոոս աղաչեցէ՛ք, խնդրելով և պաղատաճօք, զի բացցի աչք իմ հոգւոյ և լուսաւորեցէ իւրով աստուածութեամբն և թողցէ զիմս յանցանս և ողորմեսցի ամենակալն Աստուած»⁴⁵։

Նման մտայնությամբ հոգևոր խոկումների գիրկն ընկած Մագիստրոսը բնական մղումով հարկ է, որ ընկներ խորհրդապաշտ մտորումների գիրկը՝ ջանալով բանական ճանապարհով կապվել Բարձրյալի հետ և արժանանալ Տիրոջ ամենալից շնորհներին։ Ամշուշտ, նման պայմաններում նրա խորհրդապաշտական մտազեղումներն առաջադեմ մտածողի հոգևոր տարերքն էին, նրա վերապաց մղումների արգասիքը։

Մագիստրոսը ջատագով էր հոգևորականների համերաշխության։ Նա խնայող վաճառի առաջնորդին գրում է. «Հրամայիմք անաչառու և հնազանդ և հլու աստուածային պատուիրանին լսել և ծառայել անարատութեամբ»⁴⁶։ Նույն վաճառի միաբաններին հորդորում է լինել համերաշխ, «քանզի զի՞՞նչ բարի է կամ զի՞՞նչ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին»։ Նրանց առաջարկում է ժողով գումարել և ընտրել մոր առաջնորդ՝ վախճանվածի փոխարեն, «զոր կամի՝ Աստուած և դուք, և միաբանութեամբ գրեցէք առ իս, և փոյթ առ իս առաքեցէք»⁴⁷։

Գրիգոր Մագիստրոսը եկեղեցականներին հորդորում էր չհեռանալ լեռները, չմեկուսանալ ժողովրդից, հետևել Բրիստոսին և Տիրոջ պես շրջել ամենուր, քանզի «ոչ միայն ի լերին կարող ենք զԱստուած Բանն ի մեզ ընդունել, այլ և յամենայն տեղուք, վասն զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն մորա»⁴⁸։

Հայտնի է Մագիստրոսի բացասական դիրքորոշումը թոնդրակյան աղանդավորների նկատմամբ, որոնց նա հեռացած էր համարում Հայոց Եկեղեցուց ու նրա դավանանքից։ Այդ աղանդավորները, գրում է Մագիստրոսը, խարխլում են Հայոց Եկեղեցու հիմքերը՝ հետևելով «խարդաւանող խաւարասէր խոպանողացն և ցանկապատառ հետևողաց մոցա»⁴⁹։ Մագիստրոսը դատապարտում է թոնդրակեցիներին, որոնք մեղադրում էին Եկեղեցուն՝ նյութապաշտության (խաչի պաշտամունքի, քահանայի զգեստների, Պատարագի պարագաների և այլնի) մեջ, նաև նշում, որ նրանք մերժում են Ս. Գիրքը, Եկեղեցու խոր-

⁴⁴ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 139-140։

⁴⁵ Նույն տեղում, էջ 77։

⁴⁶ Նույն տեղում, էջ 99։

⁴⁷ Նույն տեղում, էջ 101։

⁴⁸ Նույն տեղում, էջ 91։

⁴⁹ Նույն տեղում, էջ 164։

հուրդները, հոգևոր նվիրապետությունը: Նրանց համարում է «արտաքույ օրինացն քրիստոնեից»⁵⁰:

Ինչպես հավաստում է Մագիստրոսը, թոնդրակեցիները «զինքեանս անուանեն քրիստոնեայս», և շրջելով առանց եպիսկոպոսների ու քահանաների, ասում են՝ «մեք լԱրամեան գնդէն ենք և հաւատով համեմատ մոցա»⁵¹: Անշուշտ, Մագիստրոսը համոզված էր, որ թոնդրակեցիները հավատորաց չեն, ուստի մա ընդատաջեց այն աղանդավորներին, ովքեր ցանկանում էին վերադառնալ Հայոց Եկեղեցու գիրկը և «խոստովանեցան զյանցանս իւրեանց և զմոլորութիւնս իւրեանց»: Մարդասիրական մղումներով մա Բջնիի Եփրեմ եպիսկոպոսի և ուրիշ հոգևոր հայրերի միջոցով մկրտել տվեց թոնդրակեցիներին՝ «աւելի քան զհազարս»⁵²:

Մագիստրոսը հոգածու էր մաս Եկեղեցու արժանավոր սպասավորներ պատրաստելու գործին: Իր աշակերտներ Բարսեղին ու Եղիշեին մա ուղարկեց Պետրոս Կաթողիկոսի մոտ՝ կրոնավորելու և ծառայելու «Հիսուսի կենսաբեր Սուրբ Նշանին»՝ վստահելով, որ մրանք «զձայն օտարի ոչ լուիցեն» և չեն դավի իրենց կոչմանը⁵³: Հարկավ, հետագայում մրա այս աշակերտները ձեռնադրվեցին եպիսկոպոսներ: Ընդամեն Մագիստրոսը չէր զլանում մաս սովորել հոգևոր հայրերից: Նա բարձր էր գնահատում Սյունյաց Հովհաննես արքեպիսկոպոսին՝ մրան համարելով «իր լուսատուն», «աստվածապատիվ հոգևոր տերը», «իր խոհերում վեհագույնը»⁵⁴, որակումներ, որոնք թույլ են տալիս կարծելու, որ Մագիստրոսը շատ բան է սովորել մրանից: Հովհաննեսի նկատմամբ Մագիստրոսի տածած հարգանքը հավանորեն բխում էր մաս այդ հոգևորականի կողմից Սյունյաց Աթոռի և Հայոց Հայրապետական կենտրոնի միջև հարաբերությունների բարելավման փաստից: Սյունյաց պատմիչը մրան կոչում է «յոզներանեան այրն Աստուծոյ, կրկին լուսատրիչն և երկրորդ մորոգողն մուսգեալ տանն այնմ և բոլոր աշխարհիս Սիսական», որը զահակալեց «աւելի քան զ50 ամ»⁵⁵ (1006-1056):

Հովհաննեսից Մագիստրոսը մխիթարական թուրջ է ստացել՝ «յաղագս անեզրական և անտանել տարակուսանաց կործանման բոլոր Արամեան մահանգի»⁵⁶: Նրան հղած մամակում Մագիստրոսն իր հորեղբորը՝ Վահրամիմ գնահատում է իբրև «մոր մարտիրոս և հրաշալի վկա», որը «խոցվեց Բրիստոսի խաչի թշնամիներից և մահատակվեց հանուն Մայր Եկեղեցու», իսկ Վահրամիմ ծնողները, հետևելով «իրենց մախնի» Սահակ Պարթևին, «վանս մորագոյնս շինեալ բազումս, և զաւերեալս մորոգեալ...»⁵⁷: Այդպիսով մատենագիրը հորեղբոր և մրա ծնողների վաստակն արժեվորում է մաս Եկեղեցու հանդեպ մրանց նվիրվածությամբ:

⁵⁰ Նույն տեղում, էջ 154-155, 160, 168—169:

⁵¹ Նույն տեղում, էջ 159, 161:

⁵² Տե՛ս մույն տեղում, էջ 158:

⁵³ Տե՛ս մույն տեղում, էջ 18-20:

⁵⁴ Տե՛ս մույն տեղում, էջ 46:

⁵⁵ Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն մահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, ԾԲ, էջ 295:

⁵⁶ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 36:

⁵⁷ Նույն տեղում, էջ 42-43:

Գրիգոր Մագիստրոսը խորին հարգամք էր տածում նաև Ամիի Սարգիս վարդապետի նկատմամբ, որին անվանում է «ամբողջ հոգևորական դասի մեջ «մտքերով վեհագույնը»⁵⁸, «աստվածային տելետիս»՝ հզոր «ի պուեռիկոսական մատենագրությամբ»⁵⁹: Սարգիսն հղած թղթերից մեկում խոսելով Միջագետքում, վասպուրականում իր ջանքերով ձեռք բերած խաղաղության, թոմարակեցիների աղանդի վնասակար միտումների մասին, Մագիստրոսը նշում է, որ թեև շատ է զբաղված, բայց կարոտ է այդ վարդապետի օժանդակությանը և ցանկություն է հայտնում, որպեսզի հանդիպեն և «առ միմեանս սիրով Աստուծոյ ողջունենք և առ միմեանս զգեղեցիկ հակառակութիւնսն ճեպենք իմաստասիրել»⁶⁰: Այս վարդապետին Մագիստրոսը դիտում է որպես քրիստոնեացված մոր պլատոնականության հետևորդ՝ «զմորագոյնս իբրոյ չքնաղ և պայծառ պղատոնական»⁶¹: Հետևաբար, Մագիստրոսը Սարգիսի մեջ զմահատել է նրա մտավոր տարերքը և իմացական արժանիքները: Մագիստրոսի թղթերից երկում է, որ երբ վերջինիս և Գագիկ II արքայի միջև հույժ սրվել էին հարաբերությունները (որի հետևանքով Մագիստրոսը մեկուսացել էր Բջնիում), արքան Սարգիսն ուղարկեց նրա մոտ, որպեսզի հաշտեցնի իր հետ: Սարգիսը ժամանեց Պահլավունյաց երկրորդ ոստան՝ Ամբերդ, և այնտեղից հաշտության ջուրջ թուղթ հղեց Մագիստրոսին, որը պատասխանեց նամակով՝ լի ցավատանջ մտորումներով⁶²:

Գրիգոր Մագիստրոսն իր իմացական խոհերը կիսում էր նաև Սևանա վանքի Սարգիս վարդապետի հետ: Երբ նա տեղեկացավ Բյուզանդիա տարագրված Գագիկ II-ի մոտ Սարգիսի մեկնելու մասին, խնդրեց, որպեսզի վերջինս նախ այցելի իրեն, որպեսզի «ճեպենք իմաստասիրել», - գրում է նա⁶³: Մագիստրոսը թղթակցում էր նաև Տարոնի Ս. Կարապետ վանքի վանահոր՝ Սարգիսի հետ: Նշելով Սարգիս «կատարյալ գիտության և իմաստության» մասին, նա գրում է, որ «Հոգւոյն այսոքիկ շարժին ի մեղ ներգործութիւնք. քանզի յորժամ կամիցի զողորմութիւն իւր առատացուցանել և հրաշագործել, յաւելու զհաւատսն զօրութեամբ և զհայցուածսն ըստ պատշաճին... այսպէս Ստեղծիչն միշտ հմարի զհոգւոց և մարմնոց մերոց փրկութիւն»⁶⁴: Ս. Կարապետի այս վանահայրն աշակերտել էր Մագիստրոսին, երբ վերջինս դասավանդում էր այդ հուշակավոր մենաստանի ճեմարանում⁶⁵: Մագիստրոսը վանահորից խնդրում է միջոցներ գտնել ծաղիկ հիվանդությանը տառապող իր որդուն բուժելու համար⁶⁶:

Գրիգոր Մագիստրոսն իր իմացական մտորումները կիսում էր նաև Գրիգոր և Ստեփաննոս անուններով արքեպիսկոպոսների, Մոկքի և Մանազկերտի եկեղեցական վիճակի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի, Պահլավունյաց հայրենական տիրույթների հոգևոր

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 54, 57:

⁵⁹ Նույն տեղում, էջ 57:

⁶⁰ Նույն տեղում, էջ 69:

⁶¹ Նույն տեղում, էջ 69:

⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 64:

⁶³ Տե՛ս նույն տեղում, էջ 68-69:

⁶⁴ Նույն տեղում, էջ 73:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 71-72:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 74-75:

հայրերի, զանազան կրոնավորների հետ, խորհուրդներ տալիս նրանց, ակնկալում նրանց հոգեկցությունը:

Մագիստրոսը մտերմիկ հարաբերությունների մեջ էր նաև Մարմաշենի վանքի առաջնորդ Սոսթենես եպիսկոպոսի հետ: Գիտնականը նրան համարում էր «ամենայն աստուածելի և պատգամացն տեսանող և յարդարող», որը խոտվահույզ ժամանակներում դարձավ «ճակատամարտիկ իմն, միամարտ և աննահանջ արիությամբ դիմակայեալ անտանելի և անժուծելի խազմարարաց ներքուստ և արտաքուստ»: Նա Սոսթենեսին ուղարկում է կնքամատանի՝ «պերճ և պաճոյճ մակագրեալ»⁶⁷:

Հայոց Եկեղեցու հիմքերն ամրապնդելու, նրա դավանանքը տեսական բարձր հիմքերի վրա դնելու համար Գրիգոր Մագիստրոսը հիմնեց և հովանավորեց Սանահինի, Կեչառույքի, Բջնիի, Հավուց թառի և Տարոնի Ս. Կարապետ վանքի ճեմարանները, որտեղ տրվում էին նաև աստվածաբանական, դավանաբանական խորը գիտելիքներ:

Մագիստրոսը մեծ ավանդ ունի և եկեղեցաշինության բնագավառում: Նա հայրենի ուստան Բջնիում կառուցել տվեց Ս. Աստվածածին հույաշուք եկեղեցին⁶⁸: Պահպանվումների մյուս կենտրոն Կեչառույք ավանում (Ծաղկոցաձոր) 1051 թ. Մագիստրոսը կառուցեց Ս. Գրիգոր եկեղեցին⁶⁹ այն օժտելով «սպասուք, արծաթեղինօք և ոսկեղինօք զրովք եւ այլովք պիտոյիք... գեղոս երկուս և այգի մի»⁷⁰: Նա յուրաշեն Հավուց թառի Ամենափրկիչ եկեղեցու կառուցման առթիվ 1013 թ. թողած արձանագրության մեջ հավաստում է, որ «զանձագին արարի զվայրս սորա լերամբն և դաշտամբն և ամենայն կազմութեամբն, որ ի սմա», չի մոռանում նաև շեշտել, որ դրել է «զվեմն հաւատոյ հիման Սուրբ Եկեղեցոյ»⁷¹: Այս եկեղեցին XIII դ. նշանավոր ուսումնագիտական կենտրոն էր, ուր զբաղվում էին նաև աստվածաբանությամբ:

Գրիգոր Մագիստրոսը հովանավորում էր նաև Սանահինի վանքին կից գործող վարդապետարանը, որտեղ նա ուներ իր ճեմարանը (կոչվել է «ճեմարան Մագիստրոսի») ⁷²:

Գրիգոր Մագիստրոսի ողջ գործունեությունը վկայում է, որ նա հավատացած էր, որ հայության հարատևման կայուն գրավականը եղել և մնում է Հայ Առաքելաշավիղ Եկեղեցին:

⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 102-104:

⁶⁸ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 271-272:

⁶⁹ Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 58-59:

⁷⁰ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 260:

⁷¹ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 354, Գ. Յովսէփեանց, Հատուց թառի Ամենափրկիչը, էջ 2:

⁷² Տե՛ս Լ. Խաչերյան, ճշվ. աշխ., էջ 273: